ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ II ԿԵՍԻՆ

(թվային, սոցիալական և ռեգիոնալ կազմը)

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հետևանքով հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները (նյութական դրության համեմատական բարելավում, տնտեսության և առևտրի աշխուժացում, մասնավոր և պետական դպրոցական ցանցի ստեղծում) հարյուրավոր հայ երիտասարդների համար իրական հնարավորություններ ստեղծեցին կրթություն ստանալու Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, մանավանդ որ ցարական կառավարությունը նոր միացված երկրամասի տնտեսական յուրացումն ապահովելու համար իր հերթին շահագրգռված էր ռուսական գահին նվիրված, տեղական ծագումով մեծ քանակությամբ կադրերի՝ թարգմանիչների, աստիճանավորների, բժիշկների և այլնի պատրաստման գործում։

Այս ամենի հետևանքով սկիզբ է առնում դարերի խորքից եկող հայ-ռուսական մշակութային առնչությունների մի նոր ձև, և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները կարճ ժամանակամիջոցում դառնում են հայ մտավորականության պատրաստման հիմնական դարբնոցներ։ Այդ գործում հատկապես նկատելի ավանդ ունեն Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանները։ Հայ երիտասարդության հոսքը Ռուսաստանի, մասնավորապես Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններ ուժեղացավ XIX դ. 50—60-ական թվականներից։ Դա կապված էր առաջին հերթին հայ իրականության մեջ կապիտալիստական արտադրահարաբերությունների ուժեղացման, բուրժուական ազգի ձևավորման, նրա ազգային ինքնագիտակցության և մշակութային դարթոնքի պրոցեսի հետ։ Հայ ուսանողության թվական աճին նպաստում էր նաև այն, որ մինչև դարի 70-ական թվականները հայ ուսանողության թիվը Ռուսաստանի համալսարաններում սահմանափակող որևէ օրենք չկար։ Հայ ուսանողության թվական աճի միտումը ընդհանուր էր կայսերական բոլոր համալսարանների համար, սակայն այն հատկապես նկատելի էր Մոսկվայի համալսարանում։ Այսպես, ընդամենը տասը տարում՝ 1851—1861 թվականներին, նրանց թիվը եռապատկվում է՝ 14-ից հասնելով 45-ի։ Այդ տասնամյակում Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 281 հոգի (աղ. № 1)[1]։

Հատկանշական է, որ այդ աճը հիմնականում տեղի է ունենում ի հաշիվ առևտրաարդյունաբերական և աստիճանավորական խավերից ելած երիտասարդության։ Ընդհանուր առմամբ համալսարանական ուսանողների միջին թվի համեմատությամբ հայ ուսանողության սոցիալական կազմը շատ ավելի դեմոկրատական էր (աղ. № 1)։ Ժողովրդին մոտ կանգնած խավերից ելած ուսանողությունը կազմում էր հայ ուսանողության ընդհանուր թվի կեսից ավելին,

---

[1] *Աղյուսակը կազմել ենք* «Отчеты о состоянии и действиях Императорского Московского университета за 1851—1861 гг.» *տարեկան հաշվետվությունների և* «Именная ведомость об учащихся к 1-му января 1851—61 годов», *լրատուի տվյալների հիման վրա։ Աղյուսակը կազմելիս նպատակահարմար ենք համարել տոհմական պատվավոր քաղաքացիներին, քաղաքաբնակներին, բանկային մակլերներին և այլնին միավորել «քաղքենի» և «առևտրական» սյունակների տակ, քանի որ ուսանողների անձնական գործերը ցույց են տալիս, որ նրանց գերակշռող մեծամասնությունը պատկանում էր այդ դասերին։*

այն դեպքում, երբ նույն ժամանակաշրջանում մյուս ազգերի մեջ ազնվականները, հոգևորական ծագումի ուսանողության հետ, կազմում էին ընդհանուր ուսանողության 77%-ից ավելին[2]։

Հայ ուսանողության համեմատաբար դեմոկրատական կազմը, մեր կարծիքով, բացատրվում է հայ ժողովրդի դասակարգային կառուցվածքի յուրահատկությամբ, տոհմական ազնվականության համեմատաբար փոքր քանակով։ Հայ ժողովրդին դարեր շարունակ ստրկական լծի տակ պահող Բյուզանդիան, շահական Պարսկաստանը և օսմանյան Թուրքիան հայ տոհմական ազնվականությանը դիտում էին որպես ժողովրդի քաղաքական ազատագրումը կազմակերպող վտանգավոր ուժ և նրա հանդեպ վարում էին ֆիզիկական ոչնչացման ու բռնի ձուլման քաղաքականություն։ Մի քանի դար տևած այս քաղաքականությունը ի վերջո հանդեցրեց հայ տոհմական ազնվականության համարյա

Աղյուսակ № 1

Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների սոցիալական կազմը (1851—1861)

Ուսումնական տարի	Ուսանողների թիվը	Ազնվական	Ավագ սպաների որդիներ	Քաղքենի	Առևտրական	Հոգևորականների որդիներ	Պետական գյուղացի
1851—1852	14	6	1	-	—	--	—
1852—1853	18	7	3	7	—	1	—
1853—1854	20	9	3	7	—	1	—
1854—1855	25	10	2	8	2	3	—
1855—1856	22	7	1	8	3	2	1
1856—1857	29	5	2	11	4	6	1
1857—1858	33	7	3	10	7	6	—
1858—1859	34	5	3	8	11	6	1
1859—1860	41	10	5	11	9	5	1
1860—1861	45	10	8	14	5	7	1
ընդամենը՝	281	76	31	90	42	37	5

լիակատար վերացմանը։ Աչքի էր զարնում նաև աշխատավորական խավերից եկած, հատկապես գյուղացիական ընտանիքներից սերած ուսանողության փոքրաթվությունը։ Այդ երևույթը ընդհանուր էր բոլոր համալսարանների համար և, հարկավ, ցարական կառավարության՝ լուսավորության բնագավառում վարած քաղաքականության ուղղակի արդյունքն էր։

Անդրադառնալով բարձրագույն կրթության բնագավառում ցարական կառավարության վարած քաղաքականությանը, նշենք, որ XIX դ. 70—80-ական թվականներին ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև հայերի. նկատմամբ այն վաղուց արդեն դադարել էր «հովանավորական» լինելուց։ Ավելին. չդիմելով բացահայտ օրենսդրական արգելքների, կառավարությունը վարչական մի շարք միջոցառումների օգնությամբ փորձեց սահմանափակել Կովկասից երիտասարդների մուտքը մայրաքաղաքային համալսարաններ։ Այսպես՝ Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններ ընդունվելիս առավելությունը տրվում էր այդ ուսումնական օկրուգների գիմնազիաների շրջանավարտներին, դրանով իսկ ստիպելով շատ հայ երիտասարդների միջնակարգ կրթության ավարտական քննությունները հանձնել մոսկովյան ուսումնական օկրուգի գիմնազիաներում կամ Լազարյան ճեմարանում[3]։ Շարունակելով այդ քաղաքականությունը, ժողովրդական լուսավորության մինիստրությունը 1889 թվականին հրաման արձակեց, որով հասումության վկայական ունեցողները պետք է դի-

[2] «Отчеты о состоянии и действиях Императорского Московского университета за 1851—1861 гг.».

[3] Центральный Государственный исторический архив г. Москвы (այսուհետև՝ ЦГИА), ф. 416, оп. 515, д. 12.

մնին իրենց օկրուգի համալսարանը[4]։ Այնքանով, որքանով կովկասյան ուսումնական օկրուգը չուներ իր համալսարանը, կովկասցի դիմորդներին առաջարկվում էր դիմել Խարկովի, Կիևի, Նովոռոսիյսկի համալսարաններ։

Ինչ խոսք, այսպիսի քաղաքականությունը չէր կարող բացասաբար չանդրադառնալ Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանների հայ ուսանողության թվական աճի վրա։ Ուստի պատահական չէ, որ XIX դարի 70-ական թվականներին հայ ուսանողության թիվը ոչ միայն չաճեց, այլ որոշ տարիների նույնիսկ նվազեց։ Այսպես. 1871 թ. Մոսկվայի համալսարանի ամենահայաշատ՝ իրավաբանական և բժշկական ֆակուլտետներում սովորում էին միայն 21 հայ երիտասարդներ[5]։ 1878—1879 ուսումնական տարում համալսարանն ուներ ընդամենը 34 հայ ուսանող[6], այսինքն՝ այնքան, ինչքան 1858—1859 թվականին։ Դրությունը չի փոխվում նաև հաջորդ՝ 1879—1880 ուս. տարում՝ 39 ուսանող[7]։

Սակայն, այնուամենայնիվ, 80-ական թվականներից նկատվում է Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության թվական աճի միտում, որն անշեղորեն շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Արդեն 1882 թ. հայ ուսանողների թիվը հասավ 56[8], 1884—1885 ուս. տարում՝ 66[9], 1887—1888 ուս. տարում՝ 58[10], իսկ 1891—1892 ուս. տարում՝ 64 ուսանողի[11]։ 1894 թ. հայ ուսանողների թիվը բոլոր չորս՝ իրավաբանական, պատմաբանասիրական, բժշկական, ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում կազմում էր 94 մարդ, 1897 թ.՝ 119, 1903-ին՝ 152, 1905-ին՝ 194[12]։

Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության թվական աճի հետ շարունակվում էր նաև նրա սոցիալական կազմի դեմոկրատացման պրոցեսը։ Այն ներկայացնում էր հետևյալ պատկերը. 1878—1879 ուս. տարում 33 հայ ուսանողներից ազնվական ծագում ուներ ընդամենը 1-ը, պետական պաշտոնյաների որդիներ էին 5-ը, հոգևորական ծագում ունեին 7 ուսանող, առևտրականների որդիներ էին 6-ը, գյուղացի՝ 3 և քաղքենիական ընտանիքներից էին 12 ուսանող[13]։ Հաջորդ՝ 1879—1880 ուս. տարում 39 հայ ուսանողներից քաղքենիական դասին պատկանում էին 16, առևտրական՝ 4, ազնվական՝ 6, հոգևորական՝ 5, գյուղացիական դասին՝ 2 ուսանող, իսկ 6 հոգի պետական պաշտոնյաների որդիներ էին[14]։

Սոցիալական կազմի դեմոկրատացման առումով առավել բնութագրական է 1884—1885 ուս. տարին, որի ընթացքում սովորող 66 հայ ուսանողներից 16-ը քաղքենիներ էին (24,2 %), 14-ը գյուղացիներ (21 %), առևտրական դասին էին պատկանում 7 ուսանող (10,6 %). հոգևորական դասին՝ 10-ը (15 %), պետական պաշտոնյաների որդիներ էին 7-ը (10,6 %), ազնվականների զավակներ էին 10 ուսանող (15 %), մեկ ուսանող ավագ սպայի որդի էր (1,5 %) և մեկ ուսանող էլ՝ օտարահպատակ[15]։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ ուսանողության մեջ դեմոկրատական խավերին պատկանող ուսանողները կազմում էին բացարձակ մեծամասնություն։

---

4 А. А. Лалаян, Русско-армянские медицинские связи (XIX век и начало XX века), докт. диссертация, Ереван, 1965, с. 90.

5 ЦГИА, ф. 418, оп. 515, д. 8.

6 Նույն տեղում, գ. 12։

7 Նույն տեղում, գ. 14։

8 Ա. Արշարունի, Մոսկվայի համալսարանը և հայ տաղավոր մտավորականությունը, Երևան, 1982, էջ 65։

9 ЦГИА, ф. 418, оп. 515, д. 15.

10 Նույն տեղում, գ. 17։

11 Նույն տեղում գ. 19։

12 Ա. Արշարունի, նշվ. աշխ., էջ 184։

13 ЦГИА, ф. 418, оп. 515, д. 12.

14 Նույն տեղում, գ. 14։

15 Նույն տեղում, գ. 15։

Քննության առնվող ժամանակաշրջանում նկատելիորեն ընդլայնվում է նաև հայ ուսանողության ռեգիոնալ ներկայացուցչությունը։ Եթե առաջին հայ ուսանողները հիմնականում ներկայացնում էին Ռուսաստանի հայկական գաղթօջախները, ապա ընդամենը մի քանի տասնամյակ անց նկատելիորեն մեծանում է Կովկասից, մասնավորապես Հայաստանից եկած ուսանողների թիվը։ Արդեն 60—70-ական թվականներին հայ ուսանողության մի ստվար հատվածը Անդրկովկասից էր, ավելին՝ բուն Հայաստանից։ Նշված առումով բնութագրական էր 1884—1885 ուս. տարին՝ 66 ուսանողից 11-ը Թիֆլիսից էին, 15-ը՝ Երևանի նահանգից, 9-ը՝ Եկատերինոսլավից։ Ուսանողներ կային նաև Ալեքսանդրապոլից, Էջմիածնից, Շուշիից, Ստավրոպոլից, Սիմֆերոպոլից և այլն[16]։

Այսպիսով, 1862—1894 թվականներին Մոսկվայի համալսարանում գործող չորս ֆակուլտետների լրիվ դասընթացը ավարտել և բժշկի, իրավաբանի, բանասեր-պատմաբանի, բնագետների ու մաթեմատիկոսների ավարտական դիպլոմներ էին ստացել 440 հայ երիտասարդներ։ Ըստ տարեթվերի նրանց թվական կազմն ուներ հետևյալ պատկերը (աղ. № 2)։

Աղյուսակից երևում է, որ միջինը տարեկան եղել է 13—14 հայ շրջանավարտ, որ կազմում է համալսարանի շրջանավարտների 2—3 %-ը։

1884—1895 թթ. համալսարանն ավարտած 232 հայ երիտասարդները ըստ նահանգների բաժանվում էին հետևյալ խմբերի՝ 74 ուսանող՝ Հյուսիսային Կովկասի և միջին Ռուսաստանի քաղաքներից, այսինքն՝ Եկատերինոդարից, Ստավրոպոլից, Նոր Նախիջևանից, Արմավիրից, Մոզդոկից, Ղզլարից, Աստրախանից, Սիմֆերոպոլից և այլն։ 156 ուսանողներ Անդրկովկասից էին՝ Թիֆլիսի նահանգ՝ 60 մարդ, Երևանի նահանգ՝ 43, Գանձակի նահանգ՝ 37, Բաքվի նահանգ՝ 4, Դերբենդի՝ 4, Կարսի՝ 5, Քութայիսիի նահանգ՝ 3[17]։

XIX դ. կեսերից Մոսկվայի համալսարանում տեղի ունեցող՝ հայ ուսանողների կազմի դեմոկրատացման և թվական աճի պրոցեսը ընդհանուր է Ռուսաստանի բոլոր համալսարանների համար։ Պատկերը գրեթե նույնն էր նաև Պետերբուրգի համալսարանում։ Մոսկվայի համալսարանի նման այստեղ ևս ուսանողության թվական աճը տեղի էր ունենում հիմնականում առևտրաարհեստավորական և տարաստիճան միջավայրից ելած ուսանողության հաշվին։ Հատկապես աչքի էր ընկնում քաղքենիական և արհեստավորական ծագումով ուսանողության թվական աճը։ Այսպես, եթե քննության առնվող ժամանակաշրջանի առաջին քսանամյակում՝ 1850—1869 թթ. Պետերբուրգի համալսարանն ավարտել էին ընդամենը 30 հայ երիտասարդ[18], իսկ հայ ուսանողության տարեկան միջին թիվը չէր անցել 10/12 մարդուց[19], ապա դարի վերջում Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողության թիվը անցնում էր երեք տասնյակից[20]։ Առանձնապես մեծ է հայ ուսանողության թիվը իրավաբանական ֆակուլտետում՝ 1899 թ.՝ 23 մարդ[21], 1900 թ.՝ 24[22]։

Պատմական այդ կարճ ժամանակամիջոցում նկատելի փոփոխություններ է կրում նաև ուսանողության սոցիալական կազմը։ Օրինակ՝ 1866 թ. Պետերբուրգի համալսարանում սովորող 15 հայ երիտասարդներից 8-ը դուրս էին եկել ազնվական ընտանիքներից կամ թե ավագ սպաների որդիներ էին, մեկը հոգե-

---

16 Նույն տեղում, գ. 12, 15։

17 «Մուրճ», 1896, № 7—8, էջ 1059—1060։

18 В. В. Григорьев, Императорский Санктпетербургский университет в течение первых пятидесятилетий его существования. СПб., 1970.

19 «Список студентов Императорского Санктпетербургского университета на 1859—1860 гг.», СПб., 1860.

20 Государственный исторический архив Ленинградской области (այսուհետև՝ ГИАЛО), ф. 14. оп. 3, т. 7 (личные дела студентов).

21 Նույն տեղում, գ. 14328։

22 Նույն տեղում, գ. 14339։

վորականի որդի էր, մնացած 6-ը պատկանում էին առևտրաարդյունաբերական խավին (քաղաքաբնակների և առևտրականների որդիներ)[23]։

Արդեն 70-ական թվականներին պատկերը փոքր-ինչ այլ էր։ Լենինգրադի մարզի պետական պատմական արխիվում պահպանված այդ շրջանի հայ ուսանողության անձնական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանցից ազնվական և ավագ սպայական ընտանիքների էին պատկանում ընդամենը 3-ը, 7-ը աստիճանավորների որդիներ էին, 1-ը՝ առևտրական, 1-ը՝ գյուղական կալվածատիրոջ և 6-ը՝ քաղաքաբնակների որդիներ[24]։ 1889—1890 ուս. տարում Պետերբուրգի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի 10 հայ ուսանողներից 8-ը սերում էին տարաստիճան և քաղքենիական ընտանիքներից,

Աղյուսակ № 2

Մոսկվայի համալսարանի 1862—1894 թվականների հայ շրջանավարտները ըստ ֆակուլտետների

Թվական	Ֆակուլտետներ				
	բժշկական	իրավաբանական	պատմաբանասիրական	ֆիզիկամաթեմատիկական	ընդհանուր թիվը
1862	5	3	1	2	11
1863	6	3	—	2	10
1864	—	4	—	2	6
1865	1	7	1	4	13
1866	3	7	—	—	10
1867	—	7	—	—	7
1868	5	6	—	—	11
1869	—	7	—	—	7
1870	2	1	—	2	5
1871	5	1	—	—	6
1872	—	3	—	—	3
1873	2	—	—	—	2
1874	2	1	1	—	4
1875	4	—	—	—	4
1876	7	3	—	—	10
1877	2	2	3	—	7
1878	5	2	2	2	11
1879	10	2	3	1	16
1880	10	4	—	2	16
1881	9	5	—	2	16
1882	8	3	—	5	16
1883	2	8	4	3	17
1884	3	7	2	4	16
1885	4	8	4	5	21
1886	6	4	1	3	14
1887	4	12	1	3	20
1888	10	11	—	3	24
1889	15	4	—	10	23
1890	4	11	—	4	19
1891	5	6	1	1	13
1892	7	8	2	5	22
1893	11	7	2	3	23
1894	9	10	1	11	31
ընդամենը՝	166	167	29	78	440
%	37,7%	38 %	6,6 %	17,7 %	100 %

[23] «Список профессоров, преподавателей и студентов Императорского Санктпетербургского университета на 1866—1867 уч. годы», СПб., 1866.

[24] ГИАЛО, ф. 14, оп. 3, д. 17659, 17681, 17264, 16500, 17284, 16592, 16063, 18152, 18015, 18169, 18273, 18567.

և միայն երկուսն էին ավագ սպաների որդիներ։ Ինչպես Մոսկվայի համալսարանում, այստեղ ևս ընդարձակ էր հայ ուսանողության ռեգիոնալ ներկայացուցչությունը, այստեղ ևս նկատվում էր Անդրկովկասից և մասնավորապես Արևելյան Հայաստանից եկած ուսանողության տեսակարար աճ։ 1870—1875 թթ. Պետերբուրգի համալսարանի հայ համալսարանականների՝ պահպանված 17 անձնական գործերից երևում է, որ նրանցից 12-ը Անդրկովկասից էին (որից 5-ը՝ Հայաստանից), 2-ը՝ Աստրախանից, 1-ը՝ Պետերբուրգից և 2-ը՝ Նոր Նախիջևանից[25]։ 1890 թ. ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի 10 հայ ուսանողներից 8-ը Անդրկովկասից էին, 1-ը՝ Պետերբուրգից և 1-ը՝ Ստավրոպոլից[26]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, XIX դ. երկրորդ կեսին հայ ժողովրդի նյութական դրության համեմատական կայունացումը նրա ազգային և տնտեսական գարթոնքը հիմք դարձան այն բանի համար, որ չնայած ցարական կառավարության՝ լուսավորության բնագավառում վարած հետադիմական, իսկ որոշակի ժամանակահատվածներում անգամ ռեպրեսիվ քաղաքականությանը տարեցտարի ավելացավ Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանների հայ ուսանողության թիվը՝ դարի վերջում հասնելով 150—180 մարդու։ Ժամանակի սոցիալ-տնտեսական հնարավորությունների տեսակետից անպայման նշանակալի այդ թվին եթե ավելացնենք նաև Ռուսաստանի այլ համալսարաններում ուսանած հայ երիտասարդների թիվը, ապա առավել ցայտունորեն կերևա այն դերը, որ քննության առնվող ժամանակաշրջանում խաղացին Ռուսաստանի համալսարանները հայ մտավորականության ձևավորման գործում։ Այսպես, դարի վերջին Խարկովի համալսարանում սովորում էին 50[27], Կիևի համալսարանում 50[28] հայ երիտասարդներ։ Քննության առնվող ժամանակահատվածում Դորպատի համալսարանում ուսանել են մոտ 200[29] հայ երիտասարդներ։ Հայ մտավորականության պատրաստման գործում իր նկատելի ավանդն ուներ նաև Նովոռոսիյսկի (Օդեսայի) համալսարանը, որի գոյության առաջին 25 տարիների (1865—1890) ընթացքում այն ավարտել էին 46[30] հայորդիներ։ Փոքր չէ նաև Կազանի համալսարանի ավանդը՝ միայն 1890—1900 թթ. այն տվել է 44 հայ շրջանավարտ[31]։

Թվերն ավելի քան պերճախոս են։ և ինքնին վկայում են Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման նշանակությունը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային առնչությունների ասպարեզում։

XIX դ. II կեսին Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության վիճակագրության և ուսումնառության ընթացքի ուսումնասիրությունը մի ընդհանուր երևույթ է մատնանշում. այդ համալսարանի հայ ուսանողության նկատելի մեծամասնությունը դարի 50—60-ական թվականներին սովորել է բժշկական և իրավաբանական ֆակուլտետներում (աղ. № 2, 3)։ Դրեթե նույնն է ցույց տալիս նաև Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողության օրինակը։ 1850—1869 թթ. նրա 30 շրջանավարտներից 11-ը ավարտել են իրավաբանական ֆակուլտետը, 17-ը՝ պատմաբանասիրական ֆակուլտետի արևելյան բանահյուսության (1854 թվականից արևելյան լեզուների ֆակուլտետ) բաժինը և միայն 2-ը՝ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը[32]։

Մոսկվայի համալսարանում հայ ուսանողության՝ ըստ ֆակուլտետների այսպիսի հարաբերակցությունը ինչ-որ չափով պահպանվեց նաև հաջորդ տաս-

---

25 Նույն տեղում (личные дела студентов 1870—1875 учебных годов):

26 Նույն տեղում (личные дела студентов физ.-мат. фак-а 1889—1890 гг.):

27 Լ. Շահատյան, Նամակ Խարկովից («Մշակ», 1897, № 189)։

28 Նույնն է, Նամակ Կիևից («Մշակ», 1898, № 197).

29 Ֆ. Կլեմենտ, Համալսարան, որտեղ ուսանել է Խ. Աբովյանը («Սովետական Հայաստան», 31. VIII. 1946)։

30 «25-летие Императорского Новороссийского университета» («Историческая записка экстраординарного профессора А. И. Маркевича», Одесса, 1890).

31 «Годичные акты Императорского Казанского университета за 1890—1900 гг.».

32 В. В. Григорьев, նշվ. աշխ. (Հավելված)։

նամյակներում. 1865 թ. 32 հայ ուսանողներից 12-ը սովորում էին իրավաբանական, 10-ը՝ բժշկական ֆակուլտետներում, 8-ը ուսանում էին մաթեմատիկայի և 2-ը՝ պատմաբանասիրական ֆակուլտետներում[33]։ 1879 թ. նույն համալսարանի 33 հայ ուսանողներից պատմության ֆակուլտետում ուսանում էին ընդամենը 2 մարդ, ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում՝ 4, իրավաբանականում՝ 7, իսկ բժշկական ֆակուլտետում՝ 20 ուսանող[34]. 1880 թ. 39 հայ ուսանողներից 6-ը սովորել են պատմաբանասիրական, 2-ը՝ ֆիզիկամաթեմատիկական, 10-ը՝ իրավաբանական և 21-ը՝ բժշկական ֆակուլտետներում[35]։ 10 տարի անց՝ 1891 թ., նույն համալսարանի 64 հայ ուսանողներից պատմաբանասիրական ֆակուլտետի ուսանող էին ընդամենը 2-ը, 9-ը սովորում էին ֆի-

Աղյուսակ № 3

Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները ըստ ֆակուլտետների (1851—1861)

Ուսումնական տարի	Ուսանողների թիվը	Պատմաբանասիրական	Ֆիզիկամաթեմատիկական	Իրավաբանական	Բժշկական
1851—1852	14	1	1	4	8
1852—1853	18	—	1	8	9
1853—1854	20	1	3	6	10
1854—1855	25	1	3	5	16
1855—1856	22	1	4	3	14
1856—1857	29	—	3	5	21
1857—1858	33	1	3	8	21
1858—1859	34	—	7	11	16
1859—1860	41	—	10	14	17
1860—1861	45	—	9	16	20
ընդամենը՝	281	5	44	80	152

զիկամաթեմատիկական ֆակուլտետում, իսկ դրա փոխարեն իրավաբանականում սովորում էին 27 և բժշկականում՝ 26 հայ երիտասարդներ[36]։ 1894 թ. Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների թիվը իրավաբանական ֆակուլտետում հասավ 42-ի, բժշկականում՝ 34-ի, 1897 թ.՝ համապատասխանաբար 48-ական ուսանողի[37]։ Պատկերը նույնն է նաև Պետերբուրգի համալսարանում՝ 1889 թ. իրավաբանական ֆակուլտետում սովորում էին 23[38], իսկ 1900 թ.՝ 24[39] հայ երիտասարդներ։ Հայ ուսանողության կողմից ազատ մասնագիտություններին գերադասություն տալը, կարծում ենք, հիմնականում բացատրում են հետևյալ երկու հանգամանքները՝

1. Ազատ մասնագիտության տեր դիպլոմավոր մասնագետի համար հետագա գործունեության առավել լայն հնարավորությունները։

2. Այդ ֆակուլտետների համար հատկացված պետական թոշակների համեմատաբար մեծ թիվը (մասնավորապես Մոսկվայի համալսարանի կովկասցի ուսանողների համար բժշկական ֆակուլտետում նախատեսվում էր տարեկան 15 պետական թոշակ)[40]։

---

33 «Алфавитный список студентов Московского университета на 1865 г.», М., 1865.

34 ЦГИА, ф. 418, оп. 515, д. 12.

35 Նույն տեղում, գ. 14։

36 Նույն տեղում, գ. 19։

37 Ա. Արշարունի, նշվ. աշխ., էջ 184։

38 ГИАЛО, ф. 14, оп. 3, д. 14328.

39 Նույն տեղում, գ. 14339։

40 Ա. Լալայան, նշվ. աշխ., էջ 91։

Աչքի է զարնում պատմալեզվագրական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում հայ ուսանողության փոքրաթվությունը։ Դարավերջին Մոսկվայի համալսարանի այդ ֆակուլտետներում համապատասխանաբար սովորում էին ընդամենը 12 և 25 հայ երիտասարդներ[41]։ Եթե ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում նրանց նկատելի աճը կարելի է բացատրել Կովկասում արդյունաբերության զարգացմամբ, ապա պատմաբանասիրական ֆակուլտետի «բոյկոտը», մեր կարծիքով, պիտի աղերսել նախահեղափոխական հայ ուսուցչի անանխանձելի դրության հետ։

Այսպիսով, XIX դ. երկրորդ կեսին Ռուսաստանի, մասնավորապես Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանները դառնում են հայ մտավորականության պատրաստման կարևոր դարբնոցներ, որոնցում սովորող հայ ուսանողության քանակը դարավերջին կազմում է այն ժամանակվա համար պատկառելի թիվ։ Նշված ժամանակաշրջանում Ռուսաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները բարերար ազդեցություն են թողնում նաև հայ ուսանողության սոցիալական կազմի վրա։ Համալսարաններ. են ընդունվում դեմոկրատական խավերից երիտասարդները։ Գիտական մտքի այդ կենտրոններում, ռուս մտավորականության անմիջական ներգործությամբ դաստիարակվեց հայ մտավորականության մի ամբողջ սերունդ, որի լավագույն ներկայացուցիչները աչքի ընկնող դեր խաղացին ազգային մանկավարժության կադրերի պատրաստման, գիտության զարգացման գործում։

АРМЯНСКОЕ СТУДЕНЧЕСТВО МОСКОВСКОГО И ПЕТЕРБУРГСКОГО УНИВЕРСИТЕТОВ ВО II ПОЛОВИНЕ XIX в.

(численность, социальный и региональный состав)

БЕНИАМИН МАНУКЯН

Резюме

После присоединения Восточной Армении к России, особенно во второй половине XIX в., число армянской молодежи, поступавшей в российские университеты, постоянно увеличивалось. В подготовке высококвалифицированных национальных кадров заметную роль сыграли Московский и Петербургский университеты, в которых к концу столетия училось более 180 армян. Армяне-выпускники этих университетов принимали самое активное участие в общественно-культурном развитии восточных армян.

---

41 Ա. Արշարունի, նշվ. աշխ., էջ 185։